ԲԻԲԼՈՍ ԲԱՆԿ ԱՐՄԵՆԻԱ
BYBLOS BANK ARMENIA

Պահանջվող փաստաթղթերի ցանկ

Վարկային ծառայության դիմելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- Ընկերության ֆինանսական հաշվետվությունները (ներառյալ ծանոթագրությունները)՝ առնվազն նախորդ երկու տարիների համար:
- Տեղեկատվական հաշվետվություն վարկառուի, երաշխավորների և բաժնետերերի վերաբերյալ ACRA-ից (կամ վարկի հաշվետվության այլ համապատասխան գործիքներից):
- Դրամական հոսքերի կանխատեսումներ:

Իրավաբանական անձանց համար նախատեսված փաստաթղթեր

- Ընկերության կանոնադրության ճշգրիտ պատճենը, հիմնադրման փաստաթուղթը, կանոնադրության փոփոխությունները (եթե առկա են)
- Ընկերության պետական ռեգիստրի վկայականի ճշգրիտ պատճենը (եթե գրանցվել է մինչև 2017 թ. մարտ ամիսը) և/կամ այլ կերպ հավաստագրված տեղեկատվություն ընկերության գրանցման և գործադիր մարմնի մասին:
- Հարկային մարմնից տեղեկանք՝ պարտավորությունների վերաբերյալ (եթե կիրառելի է)
- Գործարքի հաստատման վերաբերյալ նիստի արձանագրության և (կամ) խորհրդի որոշումը

Պահանջվող հավելյալ փաստաթղթեր՝ ըստ իրավաբանական անձի տեսակի

1. ՍՊԸ, Կոոպերատիվ Հիմնադրամներ *

- Մասնակիցների, հոգաբարձուների, հիմնադիրների և (կամ) տնօրենի / գործադիր մարմնի անձնագրի/ID/ՍՔ-ի պատճենը

- Պետական ռեգիստրից քաղվածքը, Ընկերության բաժնետոմսերի նկատմամբ սահմանափակումների և/կամ ծանրաբեռնվածության վերաբերյալ տեղեկությունների մասին
- Ընկերության զուտ ակտիվների մասին հայտարարություն

---

2. ԲԲԸ / ՓԲԸ*

- Պետական դեպոզիտարիայից կամ Ընկերության բաժնետերերի ռեեստրը պահպանող այլ լիցենզավորված ընկերության կողմից քաղվածք բաժնետերերի, բաժնետոմսերի և սահմանափակումների մասին
- Ընկերության տնօրենի և հաշվապահի կողմից ստորագրված և կնքված Ընկերության վերջին հաշվեկշռի կրկնօրինակը և/կամ հաստատող Նամակը
- Բաժնետերերի և տնօրենի անձնագրի/ID/ՍՔ-ի պատճենը

---

3. Ֆինանսական կազմակերպություններ**

- Ընկերության լիցենզիայի ճշգրիտ պատճենը
- Ընկերության տնօրենի նշանակման որոշումը
- Սեփականետերերի և տնօրենի անձնագրի/ID/ՍՔ-ի պատճենը
- Հայաստանի Կենտրոնական բանկի կողմից կանոնադրության և տնօրենի վերջին փոփոխությունների գրանցման վկայականը **(ուժի մեջ է 30 օր)**

---

4. Անձնական / կորպորատիվ երաշխավորություն

- Երաշխավորի անձնագրի/ID-ի, ՍՔ-ի պատճենները
- Կորպորատիվ երաշխավորի դեպքում կիրառվում են իրավաբանական անձանց համար սահմանված փաստաթղթերի պահանջների չափանիշները:

Գրավի հետ կապված փաստաթղթեր

1.Անշարժ գույքի գրավադրում

- Անշարժ գույքի սեփականության վկայականի բնօրինակը
- Անշարժ գույքի վկայական Կադաստրի կողմից `գրավադրվող գույքի սահմանափակումների վերաբերյալ **(Միասնական – ուժի մեջ է 15 աշխատանքային օր)**
- Անշարժ գույքի ձեռքբերման հիմքերը հավաստող փաստաթղթերի պատճենը

- Բոլոր ներգրավված կողմերի անձնագրերի/ID-ների, ՍՔ-ի պատճենները և, համատեղ սեփականության դեպքում, ամուսինների ամուսնության վկայականի պատճենը:

---

2. Տրանսպորտային միջոցների գրավադրում

- Ավտոմեքենայի սեփականության վկայականի բնօրինակը
- Ճանապարհային ոստիկանությունից վկայական, մեքենայի կարգավիճակի և տրանսպորտային միջոցի սահմանափակումների վերաբերյալ (վավեր է 5 աշխատանքային օր)
- Ավտոմեքենայի տեխնիկական անձնագրի պատճենը
- Բոլոր ներգրավված կողմերի անձնագրերի/ID-ների, ՍՔ-երի պատճենները և, համատեղ սեփականատիրության դեպքում, ամուսինների ամուսնության վկայականի պատճենը:

---

3. Շարժական գույքի գրավ (սարքավորում, արտադրական գիծ և այլն)

- Շարժական գույքի ամբողջական և մանրամասն ցուցակ
- Հիմքեր (մաքսային հսկողության փաստաթղթեր և/ կամ հաշիվ ապրանքագիր և/կամ ցանկացած այլ փոխկապակցված փաստաթուղթ)
- Բոլոր ներգրավված կողմերի անձնագրերի/ID-ների, ՍՔ-ի պատճենները և, համատեղ սեփականատիրության դեպքում, ամուսինների ամուսնության վկայականի պատճենը:

*** Եթե գործարքի մեջ ներգրավված ընկերությունը/ընկերության բաժնետերը/ընկերության մասնակիցը ունեն գրանցում արտերկրում, կարող են պահանջվել հետևյալ փաստաթղթերը (ցանկը կարող է փոփոխվել կախված գործարքից)՝**

- Ընկերության կանոնադրության, հիմնադիր փաստաթղթերի, կանոնադրության փոփոխությունների (եթե առկա են) վավերացված պատճենները
- Պետական ռեգիստրի վկայականի և տնօրենի գրանցման պատճենը կամ Ընկերության գրանցման և գործադիր մարմնի մասին այլ հավաստագրված տեղեկությունները
- Կարգավիճակի հավաստագիր և/կամ իրավական ակտ և/կամ գրանցման վկայագիր՝ նոտարական և ապոստիլային հաստատումներով

- Նոտարի և ապոստիլի հաստատումներով տնօրենի անձնագրի/ID -ի պատճենը
- Գործարքի հաստատման և լիազորության մասին թույլտվության վերաբերյալ նիստի արձանագրություն և/կամ որոշում/ եզրակացություն:

****Ֆինանսական կազմակերպությունները, որոնք գրանցված են ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակում են համապատասխան տեղեկություններն իրենց կայքում, հետևաբար վերոհիշյալ տեղեկատվությունը/փաստաթղթերը կարող են վերցվել ընկերության կայքերից:**

Ուշադրություն

Հիմնական փաստաթղթերի ցանկից զատ, անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դրանց ներկայացման կարգը և ժամկետները Հաճախորդներին ներկայացվում են **անհատապես**, քանի որ պայմանավորված տրամադրվող վարկային ծառայության տեսակով և գրավադրվող ապահովման միջոցներով դրանք կարող են տարբերվել:

Բանկը վարկային ծառայությունների տրամադրման գործընթացում ղեկավարվում է իր ներքին վարկային քաղաքականությամբ: Հիմնական որոշիչ գործոններ են հանդիսանում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները և դրանց հիման վրա կատարված վերլուծության արդյունքները, ինչպես նաև բանկի ընթացակարգին համաձայն բավարար գրավի առկայությունը և դրական վարկային պատմությունը: